Ա. ՏԱՐԻ ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 25 ԱՐԱՑ 4383 — Հ. Տ 1 ՓԵՏՐՈՒԱՐ 1892 ԹԻՒ 7

ԴԱՆԱՒ

LE DANUBE

ՀԱՆԴԷՍ ԵՕԹՆԵՕՐԵԱՅ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱԲԱԹ ՕՐԵՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամեն երկրի համար տարեկան 12 ֆր. կամ 5 ռուպլի թղթադրամ։

Պարսկաստանի համար տարեկան 8 ֆր. կամ 3 ռուպլի թղթադրամ։

Փոստի ծախքը խմբագրութիւնս կը վճարէ։

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ծանուցման տողը 50 սանթիմ է։ Հայերէն Պուլկարերէն եւ Ֆրանսերէն լեզուով։

Խմբագրութեանս դրկուած նամակ կամ գրութիւն ետ չ'տրուիր։

Նամակ եւ ծոս պէտք է դրկել հետեւեալ հասցէով։

M .S. TUTUNDJIEFF
Rédacteur du journal "TANOUP"
(BULGARIE) ROUSTCHOUK

ԱՌ ԲԱԺԱՆՈՐԴՍ

—:—

Կը խնդրեմք "Դանէսի Ազնիւ բաժանորդներեն որ բարեհաճին իրենց բաժանորդագիրն ընդհանուր յղել խմբագրութեանս եւ ընկալագիր ստանալ. որպէսզի կարենամք ստոյգ տանիլ մեր ներկայ ձեռնարկն։

ԲՈՒՍԱՃՈՒԴ

(Շաբաթական 6րդ թիւն։)

***

Բուսաճուգի Հայերը հրապարակի վրայ ամենն ալ իրենց պատուաբեր դիրքն ու զբաղումներն ունին, անգործ մարդ չ'ունինք. անտուն ալ մարդ չ'ունինք ամենքն ալ իրենց կարողութեան չափով տան և այլի տէր են, մի քանի տուն վարձուր կան ասանք ալ դրեթէ նոր հաստատուած և դուրսէն եկած տուն տեղ ընտանիք կազմող պանդուխտներ են, այս քաղաքի մէջ դիտելի է որ հին շինութեանց մէջ միայն Հայոց տուներն են երկյարկանի և բարձրագիր մնացեալները միայարկ և ցած են։

Հայերը հրապարակի վրայ ճարպիկ են Հրեայներէ աւելի. բայց պատոյ և մարդկութեան անուան նախանձախնդիր լինելով շատ անգամներ գծուծ և խարդախ Հրեայներու խարդաւանանց ալ զոհ տալէ չեն կարող խուսափիլ։

Պոլսկայ Հայերը գրեթէ ամեն տեղ Թրքաբնակ են իրենց ընտանեաց փոքրէն մինչև մեծը. մինչև իսկ իրենց թղթակցութիւնք և հաշուական գործողութիւնք. տեղացի և Պօլսեցի մի քանի վաճառականներու ամեն գործողութիւնք Հայ լեզուով կը կատարուին, բայց դարձեալ Թուրք լեզուն իրը համեմ գործածել չեն մոռանար խօսակցութիւններն քաղցրացնել կարծելու միամտութեամբ, երիտասարդութեան մի մասը յարգելի բացառութեամբ միշտ Հայերէն կը խօսի։

Ընտանեաց չափահաս հայրերը շատ անփոյթ են իրենց զաւակաց կրթութեան մասին, բայց դեռատի հայրերը զգացած են մասամբ այս թերութիւնը. իրը թէ ջանքեր ունենալ կը ձեւանան բայց գործադրել կը դանդաղին։

Տեղւոյս կանայք, գովելի պարկեշտութեամբ օժտուած են Հայ կանանց յատուկ ամօթխածութեամբ, իրենց տան մէջ ամեն ինչ են. անդուլ աշխատող, տնտեսագետ, խնայող և փողասէր. մեծ ջանքեր ունին շուտով իրենց տղաքներն ու աղջիկներն ամուսնացնելու, ունին Եւայի սեռին յատուկ մի քանի թերութիւններ, այսինքն բամբասանք, և եղբայրութեամբ քննադատութիւններ

ու մարգարէութիւններ որոնց մասին խօսել այլ առթի կը թողունք։

Որդիները ծնողասէր են. բայց ո՛չ ակնածող կարծելով թէ արդի զարգացեալ աշխարհը այս է պահանջում՝ լսելով անոնց «հին գլուխներ բան չը գիտցողներ»։ Բայց ակնածող դասեր ալ կան որոնք դժբաղդաբար մատի վրայ կը համրուին։

Կան այժմ մէկ երկու հին ազնուական տոհմերու ներկայացուցիչներ. որք թէ տեղական իշխանութեան և թէ յաջս ամեն հասարակութեան մեծ համակրանք կը վայելեն զի ասոնք միշտ ժողովրդեան իրը հոյլ խնամած և հոգ ունեցած են. իցի՞ւ թէ իրենց զաւակներն ալ իրենց հօր և պապի հետևորդներն լինին։

Աղջկունք յատուկ Եւսի սեռին սիրահար պըճնասիրութեան կը ջանան աւելի արդուզարդերուն խնամք ունենալ, քան լու մայր մը և ապագայ ընտանեաց կազմակերպութեան վրայ խորհիլ. աւելի կը խորհին իրենց փեսայացուներին տալիք նուէրներին վրայ քան այլ կարևոր հարցերու. աղջիկները գիտեն կարել կարկատել լուալ և գուլպայ հիւսել Այսուհետև Հայ աղջկան ձեռագործութիւնը կը կայանայ, հոգաթափի երես նախշելուն և կամ իրեն համար բրդեայ գլխանոց մը պատրաստելուն մէջ. Հայկական հին նուրբ ասեղնագործութիւնք բառին բուն նշանակութեամբ անծանօթ են, և երբ երբեմն պատահմամբ կը տեսնեն այդ օրինակ ձեռակերտներ «չինիմաչինի» գործ է ըսելով կը բաւականան։

Այս տեղի աղջիկները ագեղ չեն, բայց գեղեցիկ ալ ըսելու համարձակութիւն չունինք. միայն գեղեցկութիւն մ՚ունին, այն է հոգւոյ, որ չվատի չեն, և կը պատկառին իրենց ամօթգեղ դիմաք անծանօթ հիւրերուն ներկայութեան, չեն բացուիր և մեծերուն հետ խօսքի չեն խառնուիր, ընթերցանութիւն, քաղաքային կամ Ազգային հարց երբէք իրենց չի հետաքրքրէր։ Այս քաղաքի աղջիկներուն գովեստ շռայլ է, ապա թէ ո՛չ կծու պրախօսութիւններով քեզ կը ծաղրեն. Հայ լեզուով Հայ աղօթքներ չեն գիտեր. միայն «Հայր մեր» գիտեն այն ալ Աստուած գիտենալ համարէ, բայց առիթ չունին գործածելու. որովհետև Հայաստանի սեղան օրհնէքի, առաւօտեան և երեկոյեան գոհաբանական աղօթքներու սովորոյթը աստ չ՚կայ, եկեղեցի ալ ստեպ չեն երթար. ասնի օրերն է որ եկեղեցին բաղմութեան երես կը տեսնէ, ահա՛, մեր Ռուսճուգի մայրայու օրիորդներին համառօտ պատկերը, բայց ինչպէս մեր նախորդ յօդուածով չեշտած եմք, վերատին կը շեշտեմ՚ք և դիտել կուտամք ամեն տեղայի ազգայնոց որ ամեն ջանք և աջակցութիւն չը խնայեն աղնուհի խնամակալուհեաց որք ոգի՚ի բռին առած այս անտեղութիւնք բառնալու համար կ՚աշխատին, զի սոցա ջանքերն մեղ քաղցր երազներով կ՚օրօրցնեն ու կը միսիթարեն թէ գէթ ապագայ սերնդեան համար տուն տեղ կազմող ընտիր մայրեր պիտի ունենանք։ Հայ աղջիկների համար անծանօթ է Հայ կեանքէ առնուած առածներ կամ պատմութիւններ, ասոնց փոխարէն գիտեն Թուրք կեանքերէ առնուած Թուրք լեզուով հանելուկներ, պրախօսութիւններ. արագախօս են, և ջանադիր արդարանալու պատճառաբանութիւններով և համոզական փաստերով երբ իրենց մի թերութիւն դիտել կը սրրուի, իրենց սխալը կը ճանչնան բայց չեն խոստովանիր։

(Շարունակէն)

ՌՈՒՍԱՀԱՅԵՐԻ ՀԱՄՈԶՄՈՒՆԷՆ ԴԷՊԻ ՏԱՃԿԱՀԱՅԵՐԸ, ՆՐԱՆՑ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹԻՒՆԸ. ԳՈՐԾԵՐԻ ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԸ ԵՒ ԹԷ ԻՆՉ ԱՐԵԼ ԵՆ ՏԱՃԿԱՀԱՅԵՐԸ։

(Շարունակութիւն 6րդ մասէն)

Վերը յիշուածներից զատ, Արիմեան Հայրիկ, ոչ իբրեւ վանահայր, ոչ իբրեւ առաջնորդ՝ եւ ոչ էլ իբրեւ Պատրիարք՝ վարչական առաւելութիւններ չէ կարողացած ցոյց տալ, հետեւապէս ոչ էլ որպէս Արարատեան Մայր-Աթոռոյ գահակալ Հայրապետ կարող է կատարել իրանից սպասուածները, թէպետ փափաքելի է որ Հայրիկին՝ Կաթողիկոսացնել։։։ ուզողները հասնէին իրանց նպատակին. որպէս զի փորձով համոզուէին թէ քանի՞ կարճամիտ են եւ քանի՞ բգամիտ տարածութիւն ունի եղեր իրանց հակացողութիւնը Արիմանի մասին. բայց գիտնալու է որ, Կաթողիկոսութիւն ասուածը՝ ոչ գըլխարկ է եւ ոչ էլ կոշիկ, որը ուզած ժամանակ մարդ կարողանայ մակաղենից ծախու առնել ու փոխել։

Ուստի խորհուրդ ենք տալիս Հայրիկին սիրել կեղծող տիրացուներին որ թողնեն որպէս զի նա՝ մնայ իրա բարձրութեան վերայ — որպէսզի զգայուններին Կաթողիկոս, որպէս բեմբասաց Հայրենախօս։

Գալով Տաճկահայերի գործառնութեանց եւ իսկապէս գործողների մասին։ Ռուսահայերի մէջ տիրապետող իսկ ու ծուռ համոզմունքների համար գլխաւոր պատասխատուն կամ մեղաւորը չի կարելի ասել թէ՝ ինքը հասարակութիւնն է, թէ Արիստոկրատ եւ թէ ղբաս ղբախլբա— հասարակութիւնը. այլ, նոքա՝ որ աւելի կապ ունին հասարակութեան հետ, նոքա՝ որ հասարակութեան փողոցն

են ապրում, նոքա՝ որ, իրանք իրանց լուսաւորիչ, ղեկաւորիչ են անուանում, մանաւանդ նոքա՝ որ, իրանց ասելովը զարգացած (ինդդէլիգէնդիա) դասակարգը կազմում են, որովհետեւ հասարակութիւն ասուածը չը նայելով այդ զարգացած կարծուածների ինչած բարոյականին (բացառութիւնները յարգելի) հրապուրվում է միայն ու միայն նրանց այս կամ այն համալսարանից ձեռք բերած թղթից — տիպլոմայից, եւ բարեմտարար այնպիսիներին է հաւատ ընծայում, եւ նրանց ասածից ու գրածից է դատում ամեն բան։ Այս մոլորուած հոսանքի դէմ ճակատելը առ այժմ դժար է շատ դժար, այլ հարկաւոր է սպասել որ, ժամանակը ինքը երեւան բերի ու ցոյց տայ յայտնապէս, թէ՝ ո՞րն է գրուստը, եւ այդ օրը շատ հեռուն չէ։

Դեռ անցեալում Թիֆլիզից մի լրագիր էսպէս էր գրում Տաճկահայ յայտնի գործիչ հանգուցեալ պ. Յակոբ Պարոնեանի մասին թէ՝ «Ո՞վ է ասում են Պարոնեանը՝ որը մեռնելուց յետոյ անունն ենք լսում»։ Երբ Տաճկահայ հռչակաւոր երգիծաբան, «Թատրոնի» եւ «Խիկար»ի խմբագիր, «Ազգային ջոջերի» եւ «Մեծապատիւ մուրացկանների» եւ նոյն իսկ հռհռոց սատրագրութեամբ Պոլիսէն 'ի Թիֆլիզ թղթակցի մը եւ հրապարակագրի մը համար որ էսպէս են ասում, հասկանալի է թէ՝ ուրիշ գործիչների մասին գիտցածները որքա՞ն խեղճ եւ ողորմելի է։

Արդարեւ շատ ու շատ ողորմելի է Ռուսահայ ժողովուրդի դրութիւնը, որոնց ականջներն՝ ինչպէս մեծոփոլ վեր առել են Թիֆլիզում Խ-Խ նստող մի քանի պարոններ, եւ ինչ ասում որ ուզում են, փչում են հասարակութեան ականջին։

Ռուսահայ ժողովուրդը չի էլ իմանում. թէ ինչ պարոնեաններ ու չը պարոնեաններ եղել են Տաճկաստանում եւ այժմ էլ կան, որոնց անուններն չեն ուզած լսացնել իրան, կամ ինչ իսկապէս մարտիրոսներ՝ որոնց անունները էլ սեւ ու կեղտոտ գոյներով ներկայացրել են ուրոնց մասին շատ ուշ պիտի կարողանայ լսել, իմանալ, եւ զարմանքով զարմանալ։

Պարոնեանի մասին հարցունողը անտարակոյս այդ ժողովրդից կը լինի. հէնց իրաւունք էլ ունի, կրկնում ենք, ո՞վ է մեղաւորը՝ վաղճանուած Պարոնեանի նման մի յայտնի անձնաւորութիւն անծանօթ մնացել է հասարակութիւնից, յայտնի բան է, այս տեղ մեղաւորը, ինքը մամուլի ներկայացուցիչն է, ինքը խմբագիրն է, որը՝ Հայ գրագիտութեան, Հայ լրագրութեան, Աբ Քէն ինքը իրան ցոյց է տալիս։ Բայց թէ ինչո՞ւ է լսել նա՝, ինչո՞ւ չէ կամեցել ծանօթացնելու Պարոնեանին եւ նրա պէսներին որոնք զանազան ճիւղերում գործել են այնքան կանուխ, գուցէ իրան՝ խմբագրի ծնուելուց էլ առաջ, ո՛չ թէ Թիֆլիզի պուլվարներում, ո՛չ թէ գիւղիւմ, ո՛չ թէ Միւշթայիսի = այգիում, կամ վառարանով տաքցրած օթախում, այլ բուն իրա տեղը, անդաստանի վերայ, մարակել ու խարազանել են Ազգային պակասութիւններին, ընկերական ապականութիւններին։ Մարտիրոսացել են գաղաբարի անձնանուէր մշակութեան մէջ, այն էլ, ոչ թէ՝ իրա՝— խմբագրի պէս օգնականներ ուղնեանալու, ո՛չ թէ իրա՝— խմբագրի պէս բուպլիների անհաշիւ ծրարներ ընդունելու, այլ ինքնօգնաշխատութեամբ, աչքի մարգարիտներ մաշելով, սոված ու քաղցած մարտիրոսվելով ազգի սեղանին վերայ։

Նա ինքը մամուլի ներկայացուցիչը կարծում է. եթէ բարեմիտ եւ իղձահար գտնուելով երբ ժամանակ վեր հանէ եւ ցոյց ածէ նահատակ աշխատաւորի իրաւունքը, բարձրացնէ նորա արժանիքը, ծանօթացնէ նորա ա՛ղնքան վաղ ժամանակեայ ծառայութիւններին, կարծում է թէ՝ նորանով պակասում, կամ կորչում է իրա միակ եւ առաջնակ լինելու պատիւը, ահա թէ՝ ինչո՞ւ անծանօթ մնացել է Պարոնեանն։ որ ՈՒՆԷ ԱԿԱՆՋ ԸՆԼՍ ԸՆԷՑԷ։

Փայլուն եւ շողշողուն աստղերը թող զանազանէ ինքը հասարակութիւնը դառն եւ կծու ճշմարտութիւնից, եւ խօստովանուի ու ասէ թէ՝ մինչ օրս ինչ է կարդացել կամ աւելի շատ լսել Հայ մամուլից, բայի գործիչ՝ գործիչի դէմ, խմբագիր՝ խմբագրի դէմ հայհոյանքից, մինչեւ անգամ ամօթ ասած բանը առանց զգալու եւ հասկանալու, եւ կամ մազի չափ ընթերցող հասարակութիւնից ակնածելու, միմեանց ներքինի եւ անձնականի վերայ են գրում, եւ լրութեան սահմանն էլ անցկալով ընտանեկան անբնաւարելի սէմից ներս են չպտտում, քանդատութիւնը ներելի է ամեն տեղ. եթէ իրարու գրածի եւ յայտնած կարծիքի դէմ տեսլիք ունին, թո՛ղ ասեն. սա՛յն իրանց Ե՞ՆԷ ու կոպէ՛ՏՈՅ ՀԱՇԻՆԵՐԷ ՀՆԱ ինչ բան ունէ ժողովուրդը, եւ թէ ինչ է ասիպում, որ մինչեւ անգամ իրարու վարագի մէջ են մտնում ու այնտեղ փնտռում իրանց գարշելի փաստերին, որով ժողովուրդի հակայող դասակարգը զզվում է, իսկ չը հասկացող մասը՝ հետեւելով նրանց օրինակին պառակտվում է, ջոկ ջոկ բաժանված կուսակցութիւններ է կազմում, Հայը՝ Հային զրպարտում է, մատնում է, եւ սպանում, եւ այսպէս ամեն նորելուկ հաւ՝ նորանոր ձու է ածում, սունկի նման ընկերութիւններ են բուսնում ու սարքվում են, առանց մի հիմնաւոր բան ունենալու, առանց ուղիղ եւ ելանելի ճանապարհի հետեւելու։

Երեկի ԷՐԷԽՈՆ դեռ գրատեղանի վերայ նստած, կամ նոր աւարտած ու հազիւ ոտք դրած ընկերական աշխարհը, չի հաւանում տասնեակ տարիներ մարտիրոսական չարչարանքներով գործողին, որը էլի գործել է ուզում, նրա ասածները խորթ է թվում իրանց. հայհոյում են այնպէսներին եւ անպատվում, ամեն ծակ ու ծուկ մտնում, եւ անպատկառ կերպով չարութիւններ են գործում, գիտակցաբար կամ չը գիտակցաբար դաւաճանութիւններ են անում եւ հազար ու մէկ արգելքներ յարուցանում։ Վերջապէս ինչ արած. պատուաղդած մարդը՝ տեսնելով այս խայտառակութիւններին քաշվում է մի կողմ եւ առանձնանում, մտաւանդ՝ երբ տեսնում է որ ինքը հասարակութիւնն էլ վարակուած է միեւնոյն ախտով ու հիւանդութեամբ, որը ինքը իրան չ'ունի առողջ դաստղութիւն, եւ չի ուզում լսել անշուք ճշմարտութեան եւ կոյր գործիք է դառնում փայլուն սուտերին եւ Բ-ՈՂԵՆ կեղծաւորութիւններին։ Որ տեսն մնում է ասպարէզը երախտներին, մանկամիտ վարժապետներին, տիրացուներին, որոնք յոնքը չինելիս աչքն են կուրացնում։

Հազար ողբալով ասում ենք որ, եւ ոչ մի տեղ խելքը գլխին, հասկացող մարդ չի ուզում գործի գլուխ կանգնել, եւ այս տեսակ բարեմտական անհասկացողութեան մէջ մնալ. եւ հէնց դրա համար էլ է որ հարուստը եւ ունեւորը փող չի տալիս. վաճառականը չի օգնում, դիւանագիտական նրբութիւններին հմուտ խելացի մարդը չի էլ մտածում, մանկութիւնից վարժ պողպատից աւելի ամուր քաջասիրտ ու քաջակրունկ մարդը չի ուզում ժամ գալ.....։ Որով մանուկը՝ մայրը կորցրածի պէս խելքի վը՞ չածի համաձայն վայ վարդան է երգում։ Ամէն մի երեխայ իրան համար ատեան սարքում, օթեակներ հիմնում, վճիռներ է տալիս. պատիժներ է անօրինում, եւ ինչ տեսակ խայտառակութիւններ ասես անում։

Այս տեսակ խօսածներիս համար թերեւս վշտացողներ էլ լինին, սակայն ներողամիտ աչքով պէտք է նային որ այս ակամայ ժայթքումը բնական է ամէն անոնց՝ որ անկեղծ կերպով սիրում են իրանց ազգին, որք համար չեն խնայել են ոչ ինչ, եւ ուզում են նրան տեսնել մի լաւ մարդավայել վիճակի մէջ։

(Կը շարունակուի)

ՎԷՏԷՐԱՆ

ԱՌ ԻՆՔՆԱԿՈՉ ԴԵԿՏԱԴՈՐՆ Ի ՍՊԱՆԻԱԿԱՆ ԴՊԼԵԿԻ Հ. Հ. Մ

(Շարունակութիւն 5 թիւին Ա վերջ)

Քնից նոր արթնցած մանուկը առաջին անդամ հեռաքրքիր է իմանալ թէ իւր խաղալիկներն ինչ եղան եւ ուր են. գորովալից մայրը կը փութայ իսկոյն խօստումներով զայն իւր տեղից վեր կեցնել հագուեցնել. երեսները լուալ եւ ապա ցանկացած խաղալիքը նրա ներկայացնել

Այսպէս Հ. Հ. Մ. դեկտադորը երբ առաւօտները իր ձուարանին մէջ կ'արթննայ եւ երբ իրեն ձուարանին սպառնացող հով մը կամ ձայն մը կը լսէ իսկոյն կռկռոցները ու կչկչիւններն կ'արձակէ ձայն կուտայ իւր պտտառաբոյծներին որ գան զինքը պաշտպանեն այդ վտանգէն. բնականաբար հարիւրին 25—50 տասանորդ ստացող պատառաբոյծ եւ կեղծ ազգասէրներն իսկոյն ձայն կուտան միմեանց եւ կ'սկսին իրենց թխսամօրն պաշտպանել. ահա ինչպէս տեսանք իւր թերթի 41 թիւում «Հայեր 'ի Պուլկարիա» վերնագրով յօդուածի մէջ։ Եւ այս տողերը մեզ գրելու ստիպեցին քաղաքիս ողջախոհ ազգայնոց այն դիմումներն, որք այդ թերթը ստանալուն պէս իսկոյն կրակ կտրած մեզ դիմեցին բանիւ բերանով բողոքելէ վերջ փափաքեցան ստորագրել մի հանրագիր զոր մենք մերժեցինք եւ որք կը փողոքեն այսպէս. —«Թէ մենք այդ օրինակ ձրի զրպարտութիւններ չենք ընդունիր. եւ ոչ ալ Հ. Հ. Մ. ինքնակոչ դեկտադորին դիմումներ ընելով ցաւ յայտնած եմք Ձեր մասին, ադանք իրմէն տասանորդ ստացողներն են, ուստի յանուն մարդկութեան մեր այս արդար բողոքը հրատարակեցէք»։ Մենք նրանց համոզելով եւ հանդարտեցնելով ճամբու դրինք. եւ եթէ կ'ուզէք յառաջիկային ակսնէ անուանէ վաճառական դասուց սկսեալ մինչեւ գեռատի եւ զարգացեալ երիտասարդաց մեզ դիմողներու անուններն հրատարակենք, որ կարոյանանք համոզել թէ դուք, պարոն դեկտադոր «հրապարակաւ ոտա խօսելու իսկ չէք ամաչեր եւ ստելն ու կեղծելն Ձեր միտն ու ոսկորն է եղած» բայց երբ Ձեզ բարեկամ խորհուրդ կուտանք մէկդի դնէք այդ ստոր բնաւորութիւնները եւ համոզուիք որ ադանք թաւնալից միքրոպներու նման մի օր Ձեզ պիտի խեղդեն։

Դարձեալ պարոն ինքնակոչ դեկտադոր կը բաղաղէք, «կը ցաւինք պր. Թիւթիւնճիէֆի այս ասահման խոր դահավիժմանը վրայ»— խնդրեմ դուք ինձ այն ասացէք. որն եղաւ մեր դահավիժումն, ուր տեղ եւ ինչ գործի մէջ. ինչ, միթէ առանց ձեզմէ արտօնութիւն եւ կամ խորհուրդ ստանալու «Դանուբ»ի հրատարակութեան սկսելիս եղաւ, եւ կամ Ձեր օթեակի հաւատարիմ. . . գործակատարներու գործառնութիւնքն Հայ հասարակութեան ներկայացնելիս եղաւ. եւ կամ Հայ հասարակութեան բարոյապէս կամ նիւթապէս խարելու կեղծելու ելանք, որ դուք այսպիսի մի լրբութիւն կ'ունենաք. պարոն, երկու տարի առաջ Ձեր կոչմանէ Պուլկարիոյ եւ Ռումանիոյ եւ այլ երկիրների համար խրկուած պատուիրակ Պ. Մ. Ա.ի սուտ եւ շըլացուցիչ խօստումներով ժողովուրդը չարաչար խաբել եւ մեծամեծ գումարներ վարպետութեամբ որ քաշեցիք, եւ մինչեւ այսօր ժողովուրդը բիւր անդամ կը զղջայ այդ գումարները Ձեզ խրկելուն համար, եւ ժողովրդեան այս զգացումը եւ համարումը Ձեր վրայ ունենալուն ճիշտ եւ կամ սխալ լինելը հաստատելու համար խրկեցէք մի անդամ եւ այդ եւ կամ ուրիշ անձը այս կողմեր եւ պիտի տեսնէք որ հոգին այրած ժողովուրդը բահերով պիտի հալածէ քաղաքէ դուրս։ Ահաւասիկ պր. այս մեր ցոյց տուած ճշմարիտ ապացոյցներով կարծեմ կը հաստատուի թէ դահավիժումը դուք ունեցաք, եթէ գիտէք զգալ եւ դատել։ Ու՞ր են Ձեր առաջուայ բազմաթիւ համակիրները եւ բաժանորդները, ահա այս օր ամէն Հայ Ձեզ կը նկատէ իբր մի խաչա-

գոլ՝ ծածկուած կեղծ ազգասիրութեան վատ դիմակին տակ, և այդ դիմակն ալ մաշուել և ծակծկուել է շատ երկար գործածուելուն պատճառաւ, ժողովուրդը սկսաւ որոշակի տեսնել Ձեր դէմքն ու հոգին։

Հաւատութեան համար մենք կ՚ամչնամք հրատարակել այն համակրանաց և քաջալերանաց նամակներն որ ստացեր ենք բազմաթիւ տեղերէ նշանաւոր ազգայիններու կողմանէ, որք մոռացել չեն միանգամայն Ձեր մասին խիստ մեծ պատի դառնութեամբ խօսել ու այգահատել, եթէ չէք հաւատար դիմեցէք մեզ մասնաւոր նամակով անուններն Ձեզ հաղորդենք և ըստ այնմ դուք ալ ճշդելու ելէք։

Պարան, դուք պէտք է համոզուիք թէ մենք կը հրատարակենք այն յօդուածներն ու նիւթերն որք իրենց իրական փաստերն ու ապացոյցներն ունին, ո՛չ թէ ըստ հաճոյս առանց ընտրութեան և հակայսդութեան թերթ մ՚ըստելու աենջանօք և կամ Ձեզ նման բաժանորդ մ՚աւելի ունենալու թիւրամտութեամբ հրատարակենք ինչ որ մեզ կ՚ուղարկեն։ Մենք բաժանորդ ունենալու և թերթ վաճառելու ելած չենք, այլ փափաքած ենք ժողովրդեան ճանչել ու հասկացնել տալ իրեն բարեկամներն, թշնամիներն ու խաբողներն առանց փոյթ ընելու թէ քեզ նմաններու անմարելի թուին և ելլեն մեզ դրպարտեն։ Գիտենք որ մեր նախորդ թուերով մի քանի յօդուածներ հրատարակեցինք որք ցնցեցին Հայ մաքեր, որոնք երկար տարիներէ՝ի վեր քօղարկուած էին պատառաքոյծներու սուտ գովեստներէն և հրատարակութիւններէն, եթէ դուք իսկապէս ժողովրդեան ծառայել կը յաւակնիք պարտ էիք իրական փաստերով և ապացոյցներով մեզ հաստատել, այլ ո՛չ ունելիով աղբիւրներէ ժողված բառերով մեզի դէմ բոլոքներ բառնալ կազկանցիւնէ անդին չեն անցնիր բնաւ։

Արգահատելով Ձեր վերայ ինչպէս նաև Ձեր թղթակից Վ. Փափազեանցի որոյ մեր նախորդ թիւերով պատասխանեցինք. ուստի, խորհուրդ կուտանք ամեն բան հակնալէ և ճշմարտութիւնն ըմբռնելէ վերջ հրապարակ նետուիք, այլ ո՛չ վայրկենական թոյլ ազդեցութենէ մը կրակ կտրած հրաբուխի նման դուրս ժայթքել ապա ամօթով հրապարակէն ետ քաշուիլ, ու մարիլ. և կը ցաւիմք միանգամայն որ այսօր այս տողերն ալ Ձեր մասին զոհեցինք, կը կրկնեմք որ չը մոռնաք, եթէ ելլէք ուրիշ նոր ատարկութիւններ մէջ հանէք այն ժամանակ աւելի սև տողերով պիտի տիպաւորիմք Ձեզ պատասխանելը։

Մ. ԹԻԹԻՆՃԻԷԱ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՍԻԼԻՍՏՐԻ 28 ՅՈՒՆՎԱՐ 1892

ՏԷՐ—ԽՄԲԱԳԻՐ

Պատուական Հանդիսիդ «Տեղական» վերնագրով մի յօդուած տեսայ այդ առթիւ ներկայ նկատողութիւններն ունիմ եթէ կը բարեհաճիք զետեղեցէք Ձեր Հանդիսի ամենամօտ թիւերու մէկ անկեան մէջ։

Շատոնց է նետուած եմ առևտրական ասպարէզի վրայ, այս առթիւ բազդը ինձ տիպած է շրջիկ կեանք մ՚ունենայ, և այս պատճառաւ կարող եմ համարձակիլ ըսել թէ իմ կարողութեան չափով փորձառութիւններ հաւաքեցի, ոչ՝ միայն իմ անձնական գործոյս մասին, այլ նաև կեանքերու այսինքն՝ տեսայ շատ Հայեր շատ դպրոցներ և շատ ուսուցիչներ, բայց յաւօք պիտի կը յայտարարեմ թէ այդ Հայերու այդ դպրոցներու և այդ ուսուցիչներու և ո՛չ մին մի ոչոչ պակերով մեկզմեկու կը նմանին, ո՛չ մոռցայ ըսել թէ Եկեղեցիով անուս և խեղճ ու էրակ քահանայներով մեկզմեկէ չէին տարբերիր, և այդ ախուր միութեամբ կարելի է ասանք մեկմեկու եղբայրներ կամ ազգակիցներ համարեր Որովհետև տեսայ որ Հայը քաղաքէ քաղաք կը տարբերի իր տարազով իր առոգանութեամբ, խօսակցութեան մէջ գործածած ոճովն և վերջաւորութեամբն, և առանին ու արտաքին սովորութիւններովն, ևն ևն։ Այս ամեն խորթ պատկերները մեր մէջ այս համոզումն գոյացուցած են թէ, Հայը իրեն համար որոշ կրթական և դաստիարակական ուղղութիւն չ՚ունենալուն պատճառուն է, զի եթէ այս բարոյական մեծ պաշտպանը քառորդ դարու մէջ ընդգրկած լինէր, Հայը պիտի տեսնէինք այսօր ամեն տեղ գէթ մասամբ իմն մեկզմեկու մօտեցած, մինչդեռ այժմ բոլորովին հակապատկերն կը ներկայացնէ։ Այս հետևութեամբ իբր Ձեր Ցրդ թուի մէջ «Տեղական» վերնագրի տակ կարդացի տեղւոյդ դպրոցի խընդիրներ շօշափող տողեր. իբր Հայ և Հայութեան ճշմարտապարեկամ կարծելու յաւակնութեամբս կը համարձակիմ ըսել թէ, քաղաքիդ պատուա-

ւոր ազգայնոց տուած որոշումներն մասամբ իմն միակողմանի տեսութեամբ և անպատշաճ տեղացի և նոյնպէս բոլոր Հայ մանկուոյն զարգացման համար. որովհետև անձամբ այցելած և աչքս տեսած եմ Պուլկարաբնակ և Ռումանաբնակ մեր ազգայնոց դպրոցներու խեղճ կացութիւնը, թէև ուսումնասէր ծնողներն իրենց ներած սահմանի չափով ջանադիր եղած են փայլուն դպրոցներ ունենալու, բայց ունենալու միջոց չը գիտնալնուն համար միշտ իրենց ջանքերն ու նիւթերն ումպէս զոհուած են. պատճա՞ռ.— որովհետև չեն գիտցած ընտրել իրենց դպրոցներու յարմար վարիչը կամ ուսուցիչը։ Ապա որո՞նք են ընտրած,— ընտրած են այնպիսիներ գրեթէ սա պայմաններու տակ. տեղացի միոյն համակրանքը գողցողն, ազգայնոյ մը տանը մէջ լաւ պարոն, կամ փայլուն բառերով աւենախօսողն, թէև ամենին համար ալ անհասկանալի լեզուով, կամ եկեղեցիի մէջ շապկի հագած «ամենայնի» անուշ երգողն, և կամ նշանաւոր կարծուած ազգայնոյ կողմէ յանձնարարականներ ունենալի տակ կրողն, և կամ աւելի վատն տեղացի առևտրական ազգայնի մը տարակներն ձրի դրել խօստացողն, ահա՛, այս կարգի կամ՝ աւելի պակաս ձևերու տակ տեսայ գաղթական ազգայնոց մէջ դասախօսող տիրացու-վարժապետներու տխուր պատկերներն, թէև ասոնց շարքին մէջ յարգելի և հմուտ բացառութիւններ ալ տեսայ, բայց ասոնք ալ դարձեալ անընդունակ մանկավարժութեան, և դպրոցի կառավարութեան, ուրեմն ի՞նչ կը մընայ ընել գաղթական ազգայիններու իրենց մանկանց կրթութեան մեծ գործին համար. և ո՞ր տեղէ պարտաւոր են հոգալ իրենց ուսուցիչներն։— Եթէ Վենետիկի կամ Վիէննայի վանքերէն դուրս եկող ջջանաւարներէն գանտիտատներկայացնեմք մեզ և ժողովրդեան խաբած պիտի ըլլանք. որովհետև գիտցուած և հաստատուած է թէ վանքերու մէջ գլուխներու ձևը խորհելու եղանակը կը տարբերի ու կը փոխուի վանական կեանքէ հեռու ապրողներէն, ոչ նուազ բացառութեամբ վանքերէն դուրս կուգան քառակուսի գլխով մարդիկներ և այս պատճառաւ մեր վերև ակնարկած երկու վանքերն հակառակ իրենց վայելած ամեն դիւրութեանց և աղատութեանց և դրամական կոակներու մինչև այսօր մեզ աչքի զարնող իսկական ծառայութիւններ չի մատուցին, խղճի մտօք բաղդատելով իրենց կացութեանց հետ համաձայնեցանք այսպէս ըսել, թէև չենք ուրանար այն մեծ ծառայութիւնը որ մատուցին մեր գրաբառ լեզուին որով մինչև ոսկեդինիկ դարու Հայ գրականութիւնէն աւելի ճոխացուցին, բայց այդ ծառայութեամբ չի կարողացան մատուցանել բովանդակ Հայ դաւառներու մէջ գիտութիւն և լոյս ջամբելու եղանակն, այլ փոխանակ իրենց այս նուիրական պարտաւորութեանց ջանացին ներշնչել Պապերին որ Կաթոլիկական կեդրոնատ ու թանձր վարագոյրներով՝ կոնդակներ և հրաւիրագրեր ու աղօթագրքեր տպելով պարապիր. այս մեծ ու փնտակար սխալանքներն իրենք ալ ըմբռներով սկսան մեղայ գոչել։

Բազմարգիւն Հ. Ղևոնդ Ալիշանի և Հ. Քաջունիի նման վեհ ու մեծ հանճարներ դուրս գալով սկսան այդ պատը պրեալու ջանալ։

Մին իւր անմման ազգային տաղերովն քերթուածներովն և անքնահատելի գիտական և պատմական երկերովն ոգի ներշնչեց իր համարիւն եղբարց։ Միւսն իւր ճոխ հմտութեամբ ու թարգմանութիւններով ծանօթացուց ազգին թէ, Հայը ա՛չ միայն քերթուածներով և պատմութիւններով կարող է ապրիլ, ապա, արուեստով, ուստի փոխանակ Հայ մարդուն օտար լեզուներ երկար տարիներ դաս տալէ առաջ, Հային շնորհեց պարզ և դիւրահասկանալի լեզուաւ և չափագիտական օրէնքներ ևն ևն որոց 'ի կարգին. որով Հայ ժողովուրդը այս օր այս կարգի մի քանի Ս.Հայրերու միշտ շնորհապարտ պիտի մնայ, բայց այս Ս.Հայրերն ալ չգիտցան մեզ համար լաւ ուսուցիչներ ու մանկավարժներ պատրաստել ուստի այս կարգիներուն միայն մեր խորին ակնածանք նուիրելով այլ տեղեր դիմենք մեզ բժիշկ գտնելու։

Երթանք Էջմիածին, Երուսաղեմ, Ս.Կարապետ, Վարագ, Արմաշ ևն վանքեր, այս վանքերու մէջ ի՞նչ կը տեսնեմք և ի՞նչ գործունէութեան ոգի կը նշմարենք, ցաւօք սրտի կը յայտարարենք թէ տխուր երևոյթներ միայն կը տեսնենք, այս ինքն սև և տխուր դէմքեր, սև փիլոններով ծածկուած, աթոռներու թիկնածուներ, ազգի փողերով փորերն ուռեցնողներ, ասոնք կը խորհին ու կը գործեն թէ այս ինչ հարուստը երբ պիտի մեռնի, և կամ երբոր մեռնի արդեօք վանքին ի՞նչ պիտի կտակէ, երկրորդ այս ինչ աբեղան, վարդապետը կամ Եպիսկոպոսը երբոր վախճանի ի՞նչ միջոցաւ անոր փողերը դողնանք ու փախչինք, և կամ այս ինչ գործի մէջ անոր այսչափ պարգև տուինք յաջորդին ես զայն ինչպէս վայելեմ։ ահա ասոնց ալ խոր-

հածներն ու գործել ընտրած ասպարէզներն։ Մենք շատ բաներ ասոնց մասին չենք խօսիր լուութեամբ կ'անցնինք ժողովրդեան մէջ դայթակղութիւններ առաջ չբերելու նպատակաւ, հետևաբար այս վանքերն ալ մեռած անուանական տառեր են, չարժէր ասոնց ալ վրան խօսիլ. ուրեմն Հայերս ու՞ր դիմելու ենք, և կամ ուր կեդրոնացնելու ենք մեր ուշը որ տատանմամբ ըլլա ու գիտութիւն։

Հա՛, մոռցանք, մոռցանք, Պօլիս դիմելն, Ցանկահայոց լուսոյ և գիտութեան կարծեցեալ վառարանն, բայց նախ քան զմտնելն, յիշենք թէ ատ Պէնկալեան հուրերու ցուցահանդէս կայ, աչքերնիդ փակեցէք, խղճերնիդ տրտփելէ դադրեցուցէք, ճաշակնիդ խանգարեցէք, հասկացողութիւննիդ մէկդի նետեցէք, զի ասոնցմէ ո՛չ մին այս հրապարակի վրայ արժէք ունի, ամեն ի՞նչ սուտ է, ամեն ի՞նչ խաբեբայական է, այստեղ գործողն ու խօսողն միայն շարլատանն է, խաբեբայն է, կեղծաւորն է, քծնողն է, շողոքորթողն է, կաշառառուն, «ՐԺՈՆԷ» կամ «ՐԺՈՆՈՐՈՆԷՆ» բառը Դիոգինեան լապտերով փնտռեցէք, և երբ փնտռելու իսկ կ'ելլէք գիացէք որ ձեզ կ'ազդարարեն այսպէս, թէ այդ բառը «ընդ մամլով» է և կամ «սպառած»է։

Կ.Պոլսոյ Հայոց Պատրիարքարանը, Կեդրոնական, Մեղպուրեան, Պէրպէրեան, Գուրգէնեան եւն դրպրոցները և Ուսումնական ժողովները, որոնք գիշեր ցերեկ ազգին փրկութեան և յառաջդիմութեան համար, տարուան 365 օրուան մէջ օր չեն փախցներ որ մի նոր կոնդակ, որ մի նոր ծրագիր և կամ նոր ուղղութիւններ չը խմբագրեն ու հրապարակեն, մին զմիւսն հերքող ու ծաղրող, և ամեն տարի հարիւրաւոր շրջանաւարտներ դուրս տալ, մին զմիւսն չը հասկացող, և միմեանց իմաստակներ կոչող։ Ա՜հա՛, Պօլսոյ այս սխուր պատկերի փառաւոր ցուցադրումը փնտռեցէ՛ք. Ցանկտհայ գաւառներու մէջ, մտնենք մի գաւառ և ապա այդ գաւառի դպրոցը, լաւ մտքերնիդ պահեցէք այդ դպրոցի մէջ եղած ծրագրերու, գրքերու, և անոնց հեղինակներու անուններն, անցնինք մի այլ գաւառ դարձեալ մտնենք մի Հայ դպրոց, ի՞նչ պիտի տեսնեմք ո՞հ Աստուած իմ, Հայ դպրոցի ծրագիրը, դասախօսութեան գրքերը. և հեղինակներու անունները մէկզմէկէ բոլորովին տարբեր, մէկը միւսին ուղղութիւնը հրապարակաւ լրագիրներու էջերուն մէջ դատափետած, քննադատած, սխալ հրատարակած, բայց չմոռնանք ըսել թէ, ասոնց ընդ ամենն ալ միանգամայն Պօլսոյ Ուսումնական կարծեցեալ և կոչեալ ժողովներու և Ազգ. ջոջերու կողմանէ վաւերացեալ և արտօնեալ են դպրոցներու մէջ դասախօսուելու համար։ Ահա՛, այս տրխուր պատկերներու առջև մարդս բնականօրէն մի հարց կ'ունենայ, թէ արդեօք ի՞նչ են շարժառիթք այս բարոյական անկմանց և դասալից, մտնրաղնին հետաքրքրութեամբ կը դանեմք և կ'իմանամք, թէ այս ինչ ճերմակ երես կրելը, կամ այս ինչ ջոջը այս ինչ հեղինակին ո և է կողմնակցութեամբ կամ առնչութեամբ ուղղակի կամ անուղղակի մի շահ ունի կամ ունեցեր է, այդ պատճառաւ ձայն բարձրացուցեր է ամեն ջանք 'ի գործ դրեր է զայն Ազգային Ուսումնական ժողով բառած բառական մարմնոյ կողմանէ վաւերացնելու տալ, որով միայն կը նիքը կայ այլ ոչ անդամները։ Վաւերացնելու տալ և խեղճ դաւառացւոց փողերը քաշել առանց պարտնակութեանը պիտանաւորութիւնն 'ի կշիռ առնելու հրապակել և արտօնել որ դասախօսուի, այսպէս 'ի Պօլիս եկած բոլոր հեղինակներն ու թարգմանիչներն նուազ բացառութեամբ գործ պատրաստելէ առաջ իրենց գործերն կամ դեղահատերն կլլեցնելու համար ճարտար բժիշկներու կը դիմեն որ հիւանդ դաւառացւոյն զայն կլլեցնելու տալու մեծ անխղճութիւնը ունենան։ Շատեր ալ երբ չ'յաջողին զայդ բան մի դաւառացի ձայն ունեցող վարժապետ կը վարձեն, կամ թէ խօստանալով իրենց գործերի հարիւրին քսան եռեսուն նոյա թողուլ, միայն թէ իրենց աշխատասիրութիւնք ընդունին իրենց դպրոցներուն մէջ և բռնութեամբ ստիպեն աշակերտներուն որ փոխեն իրենց առաջուայ դասագրքերն «իբր սխալ գրութիւն և ձանձրացուցիչ եղանակ»։ Այս օրինակ հաղար ու մէկ սխուր պատկերներ ու անցքեր մէջ բերելու և ապացուցանելու հարկ չ'կայ, արդէն անձնիւր դաւառացին երբ ունեցած է զաւակ այդ դպրոցներու մէջ, փորձով տեսած ու հասկցած է և շատ հայրեր ալ այս պատճառաւ այսինքն՝ իրենց դաստառներուն ըստ հաճոյս հրամայած գրքերն դնելու կարող չ'լինելուն պատճառաւ տղաքնին դպրոցէն հանած են. ուստի այս ամենը և Պօլիսն ալ հետը մոռնալով տանք «Դանուբ»ին թող առնէ տանի 'ի ծով։

(Կը շարունակուի) ԱՐՋՆ

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Էջմիածնայ Սինոդը Յունվար 6 ի ազետի պատճառները քննելու համար Թիֆլիս ուղարկած է Սինոդի կողմանէ Գերապատիւ Գրիգորիս Եպիսկոպոս Ազուանեանցը։ Զո-

հերի չքաւոր ամուսնոց եւ զաւակաց օգնելու համար սկսած են հանգանակութիւններ անել. Թիֆլիզի քաղաքային վարչութեան մէջ։

Ռուսաց մեծ իշխան Կոնստանդին Նիքոլայեվիչի մահը յայտնի է, Իշխանը ծնած էր 1827 թուի Սեպտեմբերի 9ին ամուսնացած էր 1848 թուի Օգստոսի 30ին. Սագա-Ալտէնպուրկի Դքսուհի Ալէքսանդրայի հետ, որմէ հինգ որդի ունեցաւ. 3 տղայ եւ երկու աղջիկ. մին Օլգա Կոնստանդինովնան որ ամուսնացած է Յունաց թագաւորի հետ։

Անգլիոյ մի քանի քաղաքաց մէջ կառավարութիւնը ըսկսած է տուգանք նշանակել ամէն անոնց որոնք էնֆլը-էնցա-է հիւանդ լինելով տունը չեն նստիր եւ կելլեն փողոց շրջագայելու։

Մօտերս Բարլինի մէջ վախճանուեցաւ նշանաւոր անդամահատ բրոֆէսէօր Ռիչէ 'ի հասակի 57 ամաց. եւ ալեզարդ թատերագիր Պ. Դիւրոնդէ որ բացի բեմական գրուածքների. բաւական վէպեր ալ ունի գրած։

Թիֆլիզի վանքի Մայր եկեղեցու գաւթում այս օրերս Կոմս Լորիս Մելիքեանի գերեզմանի վրայ մի մեծ գեղեցիկ հատաքարեայ (granitique) շիրիմ է կառուցած. որ կրում է հետեւեալ պարզ տապանագիրը.

«ԿՈՄՍ
ՄԻՔԱՅԷԼ ԼՈՌՈՒ ՄԵԼԻՔԵԱՆ

Ծնեալ յամի 1824 'ի 21 Հոկտ. հանգեաւ առ Տէր 'ի 1888 12 Դեկտ. 'ի Նիցցա քաղաքի։»

Նոյնը Ռուսերէն լեզուով։

ԱՐՁԱԳԱՆՔ

Լոնտոնի փոստատան մէջ Դեկտեմբեր 24է մինչեւ Յունվարի 1ը երեսուն երկու միլիոն նամակ, այցետոմս եւ ծրար ստացուել է անցեալ տարուայ Մինդեան տօներու համեմատութեամբ երկու միլիոն աւելի։

Էնֆլը-էնցան Եւրոպիոյ մէջ սարսափելի ընդարձակուած է. Անտվէրպէնի մէջ 35,000 հազար հոգի էնֆլը-էնցա-է բռնուած են եւ ամէն օր 50-60 հոգի կը մեռնին նոյնպէս Ժընէվի մէջ ալ տարածուած է էնֆլը-էնցան որտեղի հիւանդանոցները լի են հիւանդներով. Իտալիոյ մէջ եւս շատ զոհեր են եղած էնֆլը-էնցա-է Միլանի եւ Թուրինի մէջ։

Ռուսաց Սինոդի աւագ դատախազի հաշուոյ իմանում ենք որ 1883 թուին Ռուսական Դատանուն Ընդունել են 393 Հայ. 1884ին 48. 1885ին 222. 1886ին 21. 1887ին 23 եւ 1888ին 7. ընդամենը 714 Հայ։ Այդ վեց տարուայ ժամանակամիջոցին Ռուս կրօնն ընդունել են 20,217 Լուտերական 6738 Կաթոլիկ. 5226 Մահմեդական եւ 3722 Հրեայ։

ՆՈՐ ԴԱՐ

ՏԵՂԱԿԱՆ

Անցեալ հինգշաբթի գիշեր տեղւոյս գպրոցասիրաց անուն ընկերութեան անդամներէ մի քանին հաւաքուելով խորհրդակցութեամբ որոշեր են թէ ընկերութեան ունեցած պատրաստ դրամագլխով մի Գլխ-ոլ հաստատել քաղաքիս Հայոց թաղի մէջ. եւ իրենց մէջ ընտրած են մի քանի անձինքներէ բաղկացեալ գործադիր ժողով մը 50 անդամներ գտնելու համար, ամիսը 3 ֆրանք վճարող որոնք միայն իրաւունք պիտի ունենան յաճախել այդ վայրը։ Կը մաղթեմք որ յաջողութիւն գտնեն։

Տեղւոյս երիտասարդութեան մէջ ալ սկսած է ջերմ եռանդը ընթերցարան մը հաստատելու համար. երանի թէ միութեամբ եւ համերաշխութեամբ գործի սկսէին եւ յարատեւ լինէր իրենց այդ ազգօգուտ ձեռնարկը։

Կիրակի (26 Յունուար) գիշերուան տեղւոյս օրիորդաց վարժարանի Ազն. խնամակալուհեաց կողմանէ տրուած պարահանդէսը շատ նպաստաւոր էր, եւ պատուաւոր, տեղւոյս Վսեմ. Կուսակալը պ. Քաղաքացիոր եւ այլ պաշտօնեայք պատուելով խնամակալուհեաց սոյն հրաւէրը բարեհաճեր էին ներկայ գտնուիլ, եւ իրենց ջերմ գոհունակութիւնը յայտնելով ուրախալի ապաւորութեան տակ մնկնած են։

ԾԱՆՈԹՈՒ ԳԻՐՔԵՐ

Հետեւեալ գիրքերն կը ծախուին «ԴԱՆՈՒԲ»ի խմբագրատան մէջ. իրենց առջեւ նշանակուած գիներով եւ փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

ԲԱՖՖԻ, ԽԵՆԹԸ (Արկածներ վերջին Ռուս-Թուրքական պատերազմից) եւ ՋՈՒԱԼԷԴԻՆ (Մի պատկեր նրա արշաւանքից). երկուքը մէկտեղ մէկ հատորի մէջ ամփոփուած. Բ. Տիպ։ 8 ֆր. 50 սանթիմ։

ԲԱՖՖԻ, ՂԱՐԱԲԱՂԻ ԱՍՏՂԱԳԻՏԸ Անգլերկրեան պատմական վէպ. 5 ֆր. 50 սանթիմ։

ԲԱՖՖԻ, ԿԱՅԷԼԻ ԿՏԱԼԸ 5 ֆր. 50 սանթիմ։

ԲԱՖՖԻ, ՄԻՆԸ ՍՅՈՊԼԻՍ, ՄԻԻՍ ՍՅՈՊԼԻՍ Պատկերազարդ վէպ. Թիֆլիսի վաճառականների կեանքից։

ԲԱՖՖԻ, ԿԱՅԾԵՐԻ ՎԵՐՋԸ 1 ֆր. 50 սանթիմ։

ԲԱՖՖԻԻ Պատկերը խոշորագիրը. 2 ֆր։

» » աւելի փոքրը. 1 ֆր.

ՏԷՐ ԵՒ ԽՄԲԱԳԻՐ Մ. Ս. ԹԻՒԹԻՒՆՃԻԷՖ

ՐՈՒՍՃՈՒԳ ՏՊԱՐԱՆ Մ.Ս. ԹԻՒԹԻՒՆՃԻԷՖԻ

Скоро печятницата на Спиро Гулабчъв.